**Արձանագրություն N 2-3**

**ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/10 ծածկագրով «Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի» կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 30.09.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահող՝ | Ա. Աչոյան |
| Անդամներ՝ | Ա. Եղիազարյան |
| | Ս. Նունյան |
| | Ա. Հյուսիսյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Գ. Հակոբյան |

Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչատրյանը

**1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին**

------------------------------------------------------------------------------------------

(Ա. Աչոյան)

Ընդունել ի գիտություն՝

1.1 Գնման ընթացակարգի մասնակից՝ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի և «Ֆիլիշին», «Էներգովեստ», «Մ.Ի.Պ.Հ. Ինջինիըրինգ» և «Վենջ Հոլդինգ» ՍՊԸ-ների կոնսորցիումի հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 26.09.2025թ. ծանուցվել է վերջիններին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 «Ֆիլիշին», «Էներգովեստ», «Մ.Ի.Պ.Հ. Ինջինիըրինգ» և «Վենջ Հոլդինգ» ՍՊԸ-ների կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

1.3 «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ ընդհանրապես չի ներկայացվել:

«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն չունի հրավերով պահանջվող 1-ին դասի լիցենզիայի «ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա» ներդիր և մրցույթին մասնակցել է ենթակապալառու կազմակերպության լիցենզիայի ներդիրով:

Համաձայն Կարգի 32-րդ կետի 7-րդ ենթակետի՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am պաշտոնական տեղեկագրի (Այսուհետ՝ Տեղեկագիր) «Հաճախ ստացվող հարցադրումների վերաբերյալ տրամադրված պարզաբանումներ» բաժնի «Պատվիրատուների կողմից տրված հարցեր» ենթաբաժնի 21-րդ կետի պարզաբանման համաձայն՝ «իրավերով սահմանված պահանջներին պետք է բավարարի մասնակիցը, իսկ ենթակապալառուն չի հանդիսանում մասնակից»:

Լիցենզիայի դասի վերաբերյալ 12.09.2025 թվականին ստացված հարցադրմանը, այն է՝ եթե կազմակերպությունը չունի իրավերով պահանջվող լիցենզիայի ներդիրը, ապա կարող է ներկայացնել ենթակապալի պայմանագիր, նույն օրը տրվել է պարզաբանում, որ տվյալ դեպքում, հայտը կարող է ներկայացվել միայն կոնսորցիումով: Պարզաբանումը «Գնումների մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն հրապարակվել է Տեղեկագրում:

1.4 Հաշվի առնելով վերոգրյալը, որ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն մրցույթին մասնակցել է ենթակապալառու կազմակերպության լիցենզիայի ներդիրով, իսկ ենթակապալառուն չի հանդիսանում մասնակից, և այն, որ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչը համարվում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի, 42-րդ կետի և իրավերի 8.2, 8.10 կետերի պահանջները՝ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

(Ա. Աչոյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | «ՋԻ ԹԻ ԷՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | բավարար | 2 289 000 000 |
| 2 | «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ», «Էլիտ Քնսթրաքշն», «ԴԱՎ-ՎԱՀ» և «Էկո Կլիմ» ՍՊԸ-ների կոնսորցիում | բավարար | 2 477 000 000 |
| 3 | Բաղրամյանշին ԲԲԸ | բավարար | 2 715 624 000 |
| 4 | «Ֆիլիշին», «Էներգովեստ», «Մ.Ի.Պ.Հ. Ինջինիրինգ» և «Վենչ Հոլդինգ» ՍՊԸ-ների կոնսորցիում | բավարար | 2 725 200 000 |
| 5 | Մեծն Էրիկ ՍՊԸ | անբավարար | 2 643 856 348 |

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին.

| Գնման առարկա | Ընտրված մասնակից | Այդպիսին չճանաչված մասնակիցներ |
|---|---|---|
| «Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի» կառուցման աշխատանքներ | «Ջի Թի ԷՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | «ՄԼ ՄԱՅՆԻՆԳ», «Էլիտ Քնսթրաքշն», «ԴԱՎ-ՎԱՀ» և «Էկո Կլիմ» ՍՊԸ-ների կոնսորցիում |
| | | Բաղրամյանշին ԲԲԸ |
| | | «Ֆիլիշին», «Էներգովեստ», «Մ.Ի.Պ.Հ. Ինջինիըրինգ» և «Վենչ Հոլդինգ» ՍՊԸ-ների կոնսորցիում |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:*

**3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

---

(Ա. Աչոյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ջի Թի ԷՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ -ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:*

**4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Ա. Աչոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ 0:*

Հանձնաժողովի

Նախագահող՝ ------------------------------ Ա. Աչոյան

Անդամներ՝ ------------------------------ Ա. Եղիազարյան

------------------------------ Ս. Նունյան

------------------------------ Ա. Հյուսիսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ------------------------------ Գ. Հակոբյան